

**ՀՈՒՅԺ ԱՐԴԻԱԿԱՆ ՈՒ ՀՐԱՏԱՊ ՄԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.  
ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ.  
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ, ԵՐԵՎԱՆ, 2014, 836 ԷԶ**

**Վահագն ԹՈՎԱՍՅԱՆ**

Տնտեսագիտության թեկնածու  
Լուս Անջելես, ԱՄՆ

Առաջին հայացքից խիստ ամբիցիոզ թվացող սույն մենագրության նախաձեռնումն իսկ խորին հարգանք է ներշնչում և վկայում, որ Թաթուլ Մանասերյանն իր առջև բնավ դյուրին իրականացվող նպատակներ չի դնում: Մյուս կողմից՝ տնտեսական անվտանգության ապահովման և արտաքին տնտեսական սպառնալիքների դիմակայման քիչ, թե շատ ուսանելի համաշխարհային գրեթե յուրաքանչյուր փորձի ուսումնասիրությունը, Հայաստանի Երրորդ Հանրապետության համար դրա տեղայնացումը, սեփական առաջարկությունների ու հանձնարարականների մշակումը, աշխատանքի ծավալը, բովանդակությունը, օգտագործված ու քննադատորեն վերլուծված գրականության ցանկն արդեն ապացուցում են հեղինակի կատարած հսկայածավալ ուսումնասիրության արժեքավորությունը:

Ժամանակակից պայմաններում համաշխարհային տնտեսության համատարած գլոբալացման ընթացքում միաժամանակ առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում ազգային էկոնոմիկաների անվտանգության ապահովման, դրանց դեմ ծագող սպառնալիքների վնասագերծման անհրաժեշտությունը: Այս միասնական և միևնույն ժամանակ իրարամերժ օրինաչափությունների մեջ ակնհայտ է փոխհակասության հիմնական օրենքներից մեկի՝ հակադրությունների միասնության ու պայքարի օրենքի ցայտուն դրսևորումը: Ուստի, զարմանալի չէ, որ գրքի հեղինակը տնտեսական անվտանգության ռազմավարական ուրվագծերը մատնանշելուց առաջ նախ ի մի է բերում դրանց վերաբերյալ տարբեր երկրներում ձևավորված ընդհանրական մոտեցումները և հետո միայն ձևակերպում սեփականը: Տնտեսագիտական մի շարք դպրոցների կողմից առաջ քաշած դոկտրինաների մանրակրկիտ քննարկումը հեղինակին հանգեցնում է այն մտքին, որ չնայած տնտեսական անվտանգությունն ապահովող կամ բնորոշող հիմնարար սկզբունքները նույնն են մակրոմակարդակում, կամ համարյա ընդհանուր են բոլոր երկրների համար, այնուհանդերձ դրանք խիստ տարբեր են միկրոմակարդակում և հասարակության առանձին շերտերի ակնկալվող նպատակների տեսակետից: Ուշագրավ ու շատ հետաքրքրական է տնտեսական անվտանգության ու տնտեսական սպառնալիքների հաղթահարման վերաբերյալ աշխարհի բազմաթիվ երկրներում, այդ թվում ԱՄՆ-ում, Չինաստանում, Ճապոն

նիայում, հատկապես Ռուսաստանի Ղաշնությունում ձևավորված տարբեր կոնցեպցիաների մանրամասն վերլուծությունը, որից հետևում է, որ վերոհիշյալ խնդիրների մեկնաբանության մեջ մեկ միասնական մոտեցում գոյություն չունի անգամ նույն երկրի տարբեր տնտեսագետների աշխատություններում (էջ 12-18): Տարբերություններ, առանձնահատկություններ, անշուշտ, կան նաև չափանիշների կամ քանակական ու որակական ցուցանիշների ընտրության ասպարեզում: Օրինակ, ինչպես իրավացիորեն նշում է Թ.Մանասերյանը, Ռուսաստանի Ղաշնության համար «ուղեղների արտահոսքը» չի կարող այնպիսի վճռորոշ, աղետալի տնտեսական սպառնալիք լինել կամ բացասական ազդեցություն ունենալ երկրի տնտեսական անվտանգության վրա, ինչպես ռեսուրսային կամ հարստության այլ աղբյուրների խիստ սահմանափակությամբ, եթե չասենք իսպառ բացակայությամբ բնութագրվող Հայաստանի: Մյուս կողմից, ՀՀ-ի նման փոքր երկրի համար ըստ առանձին ռեզիդենտների տնտեսական անվտանգության ցուցանիշների ու չափորոշիչների մշակումը խիստ անհրաժեշտություն է: Սակայն, մեր հանրապետության էկոնոմիկայի առողջացման, ներքին ու արտաքին մարտահրավերներ դիմակայող նրա տնտեսության կատարելագործման համար էական նշանակություն ունի առանձին ռեզիդենտների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների միջև եղած անհամաչափության ու մեծ ճեղքվածքի հաղթահարումը, հատկապես թույլ զարգացած շրջաններից աշխատուժի արտահոսքի մեծ չափերի կասեցումը: Ավելին, չնայած ՀՀ-ից բնակչության արտագաղթի այսպես կոչված «դրական կողմերի» (էջ 128-130) տեսակետը որոշ չափով համահունչ է հայաստանյան իշխանությունների սոցիալ-տնտեսական ու քաղաքական ռազմավարությանն ու մարտավարությանը, այդուհանդերձ, այն միանգամայն անհարիր է հայության հեռանկարային ազգային շահերին: Ինչ վերաբերվում է ժամանակավորապես գործազուրկի կարգավիճակում հայտնված փորձառու մասնագետներին միջպետական ծրագրերով արտերկիր գործուղելուն (էջ 834), ապա այն անիրականալի է ոչ միայն ֆինանսական միջոցների իսպառ բացակայության, այլև ենթադրվող երկրների աշխատուժի շուկաների գերիազեցվածության պատճառով և, վերջապես, խիստ վտանգավոր՝ «Նոյի ագռավի պատմության» հնարավոր կրկնության (ընթերցողի ներողամտությունն ենք հայցում) առումով: Հայաստանի տնտեսական անվտանգության ապահովման, աշխատանքի նկատմամբ հոգեբանական նոր վարքի ձևավորման սկզբունքային հիմնահարցերից մեկը հենց տրանսֆերտների ու տարբեր ֆոնդերից ստացված դրամական միջոցների (մեր հաշվարկներով՝ 2,0-2,5 միլիարդ դոլար, որ կազմում է երկրի ներքին համախառն արդյունքի գրեթե ¼-ը) օգտագործման արդյունավետության բարձրացումն է: Չէ որ Հայաստանում սեփական աշխատանքով չվաստակված դրամը պայմանավորում է նաև հանրապետության բնակ-

չության պարենի ինդեքսի համեմատաբար բարձր և, ընդհակառակը, վճարունակ ինդեքսի ցածր մակարդակը և դրանով իսկ աղճատում նրանց խորքային, իրատեսական պատկերը:

Հայաստանի Հանրապետության ներքին տնտեսական սպառնալիքների ցանկն ու դրանց ազդեցության աստիճանն ուսումնասիրելիս, հատկապես նրա բնակչության աղքատության սահմանի ու սպառման զամբյուղի կառուցվածքի հետազոտության ընթացքում, կարծում եմ հետաքրքիր կլինի քննարկել նաև հանրապետության բնակչության կենսամակարդակի վրա «Գեֆֆինի պարադոքսի» ազդեցության աստիճանը: Դա ավելի ազդու և ընդգծված կդարձնեն բնակչության բացարձակ աղքատացման, հնարավոր է, ընդհակառակը, նրա բարեկեցության բարձրացման ոչ այնքան ակնհայտ միտումը: Հետաքրքրական կլինեն նաև հանրապետությունում հարստության և աղքատացման բևեռացման, մի կողմից՝ սպառողական զամբյուղի և մյուս կողմից՝ աշխատավարձի ու կենսաթոշակների, այլ խոսքով ասած տնտեսական անվտանգության սոցիալական ոլորտի շեմային ցուցանիշների համեմատությունը համաշխարհային պրակտիկայում տեղ գտած միջազգային ստանդարտների հետ:

Գրքի այս բաժնում հեղինակի կատարած հետաքրքիր և ոչ դյուրին ուսումնասիրությունը մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ տնտեսական անվտանգության հիմնահարցը տարբեր մակարդակներով քննարկելիս՝ կառուցվածքի և նյութի շարադրման տրամաբանության տեսակետից հարկ է դեդուկտիվի փոխարեն կիրառել ինդուկտիվ մեթոդը, այսինքն՝ ընդհանուրից անցնել մասնավորին: Այդ դեպքում ավելի հասկանալի է դառնում միկրոմակարդակի, բնակչության բարեկեցության վրա առկա պրոբլեմների ազդեցության անմիջական բնույթն ու չափը: Նման մոտեցումը ճիշտ է պատճառահետևանքային կապի առումով ևս: Ուստի, պատահական չէ, որ կոնկրետ Հայաստանի Հանրապետության պարագայում հեղինակը տնտեսական անվտանգության հարցերը քննարկում է վերջինիս բոլոր կարևոր ասպեկտներով. ագրարային, սոցիալական, ֆինանսական, էներգետիկ, տրանսպորտային, արդյունաբերական և այլն:

Հայաստանի տնտեսական անվտանգության ապահովման կարևորագույն նախադրյալներից մեկը երկրի բնակչությանը սեփական արտադրության գյուղատնտեսական մթերքներով բավարարելու աստիճանի մշտական բարձրացումն է, և այդ առումով նյութական արտադրության այդ կարևորագույն ճյուղի (որում զբաղված է հանրապետության աշխատանքային ռեսուրսների գերակշռող բաժինը՝ 35-40%) զարգացման, նրա արդյունավետության բարձրացման համալիր հարցի քննարկումը: Դրան հեղինակն իրավամբ մեծ ուշադրություն է նվիրել: Հատկապես մանրակրկիտ և խոր

հետազոտության առարկա են դարձել ՀՀ գյուղատնտեսության հեռանկարների, այդ ոլորտում գների ձևավորման, ազֆյացիայի և դրանց կարգավորման ու վերահսկման հարցերը: Հատկանշական և ողջունելի է նաև, որ գրքի այս բաժնում հեղինակը խիստ քննադատության է ենթարկում եվրոպական որոշ կառույցների հետապնդած Հայաստանի գյուղական բնակավայրերի խոշորացման անմիտ ու վտանգավոր մոտեցումը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ մեր «թշնամիների ջրաղացին ջուր լցնող» մարտավարություն:

Հանրապետության տնտեսական, քաղաքական ու ռազմական անվտանգության տեսակետից չափազանց կարևոր է նաև երկրի առանձին մասերի, հատկապես սահմանամերձ ու հեռավոր շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների միջև տեղ գտած անհամաչափության հաղթահարմանը, դրա աստիճանական վերացմանը նվիրված ուսումնասիրությունը և այդ ուղղությամբ Թ.Մանասերյանի առաջարկությունների ծավալուն փաթեթը, որը ներառում է կառավարման, ֆինանսական համակարգի, նոր աշխատատեղերի ստեղծման, կոմունիկացիաների ու տրանսպորտային ցանցի կատարելագործման առաջնահերթությունները:

Երկրի մասշտաբով տրանսպորտային անվտանգության հիմնախնդիրը քննարկելիս մենագրության հեղինակը հիմնական ուշադրության է արժանացնում օդային փոխադրումների ոլորտը, որ միանգամայն հասկանալի է, սակայն համեմատաբար քիչ ուշադրություն է նվիրում տրանսպորտի մյուս ճյուղերի, այդ թվում երկաթուղայինի (նրա հնարավոր վերաբացման առումով) կամ խողովակաշարայինի զարգացման հեռանկարներին:

Հայաստանի Հանրապետության ընթացիկ պահանջարկի բավարարման առումով վիճակը բավականաչափ, նույնիսկ ավելին, բարվոք է էներգետիկայի զարգացման տեսակետից, սակայն այս ոլորտում լուրջ մտահոգության առարկա է նրա պատկանելիության (այդ ոլորտի գրեթե 90%-ը օտարված է և գտնվում է արտասահմանյան պետական և մասնավոր սեփականատերերի ձեռքում), ազգային շահերի տեսանկյունից վերջինիս հեռանկարային զարգացման ճիշտ մարտավարության ու ռազմավարության ընտրության հարցը:

Թաթուլ Մանասերյանի գրքի ամենահաջող հատվածներից է նաև ՀՀ արտաքին տնտեսական սպառնալիքների և գլոբալ անվտանգության հիմնահարցերին նվիրված բաժինը: Այստեղ խորը, մանրամասն ու անաչառ վերլուծության են ենթարկվում արժութային քաղաքականությունը, կապիտալի ներհոսքի ավելացման ու արտահոսքի կրճատման հնարավորությունները, ազատ տնտեսական գոտիների ստեղծման առաջնահերթությունները, երկրի վճարային հաշվեկշռի ու արտաքին պարտքի կարգավորման հրամայականները: Չափազանց ուշագրավ են ՀՀ պետական պարտքի կառավարմանն ու

կարգավորմանը, արտաքին տնտեսական սպառնալիքների բացահայտմանն ու դրանց դիմագրավմանն ուղղված հեղինակի առաջարկություններն ու հանձնարարակաները: Վերջիններիս թվում կարևոր դեր է վերապահվում հատկապես արտաքին և ներքին պարտքերի հարաբերակցության փոփոխությանը (ներկայումս այն 90 և 10% է), ինչպես նաև նրանց վերահսկման օրենսդրական նախաձեռնություններին, կոորդինացման ընթացակարգերին, «Պարտային գրքի» ներդրման անհրաժեշտությանը և այլն: Ողջունելի ու դրվատանքի են արժանի Թ.Մանասերյանի այն առաջարկությունները, որոնք նպատակաուղղված են ՀՀ իշխանությունների կողմից տնտեսական դիվանագիտության նոր հայեցակարգի ու ծրագրի մշակմանը, միջազգային տնտեսական հարաբերություններում պասսիվ գործընկերոջ կարգավիճակը քայլ առ քայլ ակտիվով փոխարինելու հնարավորությունների բացահայտմանը:

Մենագրության այս բաժնում կարելի էր ավելի մեծ ուշադրություն նվիրել երկրի արտաքին առևտրի, վճարային հաշվեկշռի ու պետական բյուջեի կազմին ու կառուցվածքին և քննարկել դրանց կատարելագործման հիմնական ուղղությունները՝ որպես հանրապետության ֆինանսական անվտանգությունն ապահովող հիմնական, վճռորոշ գործոններ:

Թաթուլ Մանասերյանի գրքի քիչ հաջողված միակ բաժինը, թերևս վեցերորդն է՝ «Տնտեսական անվտանգության ապահովման օրենսդրական և իրավական նախադրյալները» վերտառությամբ: Այն անհարկի ուռձացված է (100-ի փոխարեն կարող էր լինել 30-40 էջ), քրեական օրենսգրքի բազմաթիվ հոդվածների, ինտերպոլի ու մասնավոր գործակալությունների ֆունկցիաների, աշխատանքի առանձնահատկությունների և այլն, շարադրանքով: Այս բաժնում միջազգային տնտեսական հանցագործությունների շարքը («փողերի լվացում», թմրաբիզնես, մարդկանց և նրանց օրգանների ապօրինի վաճառք, արգելված զենքի առևտուր և այլն) քննարկելուց հետո հարկ էր ուղղակի թվարկել դրանց կանխարգելմանն ու դատապարտմանն ուղղված հեղինակի իրավական և օրենսդրական առաջարկությունները կամ արդեն գործող իրավական դրույթների բարեփոխմանը նվիրված հանձնարարականները:

Ընդհակառակը, նկատի ունենալով Հայաստանի տնտեսական անվտանգության հարցում բնապահպանական և կոռուպցիոն գործոնների կարևորությունը, ավելի ծավալուն քննարկմանն ու առանձնակի ուշադրության պետք է արժանանային հատկապես թվարկված հիմնահարցերը: Առավել ևս, որ շրջակա միջավայրի պահպանման և «չարորակ ուռուցքի նման մետաստազներ տված» կոռուպցիայի կրճատման ուղղությամբ նշանակալից է նաև աշխարհի տարբեր երկրների (ԵՄ և Սինգապուր) կողմից կուտակված դրական փորձը, ՀՀ-ում այն տեղայնացնելու հնարավորությունը և խիստ կարևոր՝

վերոհիշյալ ոլորտների «աղտահանման» ճանապարհով ապագա սերունդներին բնական ու հոգեբանական առումով առողջ մթնոլորտ ունեցող երկիր ժառանգելու հրամայականը:

Այդուհանդերձ, իր հայրենիքի տնտեսական անվտանգությանը սատարելու հեղինակի ցանկությունն ու ձգտումն այնքան մեծ են, որ նրա մշակած առաջարկություններն ու հանձնարարականները, երբեմն, դառնում են չափից դուրս լավատեսական: Օրինակ, 271-րդ էջում նա ընդգծում է, թե 5 տարի անց Հայաստանը կարող է մտնել 20, իսկ 10 տարի անց՝ 1-15 ամենաբարենպաստ տնտեսական գործունեության միջավայր ունեցող երկրների ցանկը (ներկայում այդ ցանկում ՀՀ-ը 43-րդն է), և կամ 150-րդ էջում արտահայտված այն միտքը, թե առաջիկա 10-15 տարում Հայաստանում գիտատար և բարձր տեխնոլոգիաների արտադրությունների բաժինը ներկայիս 2%-ի դիմաց կարելի է դարձնել գերակշռող: Նույն խիստ լավատեսական մոտեցումն է ցուցաբերվում նաև ազգային հարստության ապապետականացման ընթացքում տեղ գտած աղաղակող սխալներն ու անարդարությունները շտկելու նպատակով դրանց նոր, առավել արդարացի բաշխման մասին առաջարկություններում (էջ 160-163):

Նման ծավալուն և բարդ ուսումնասիրության ընթացքում, բնական է, հեշտ չէր խուսափել նաև խմբագրական, տեխնիկական բացթողումներից: Այսպես, կարծում ենք գրքի ընթերցմելիությունը հեշտացնելու առումով նպատակահարմար էր բովանդակության մեջ նշել ոչ միայն մենագրության բաժինները, այլ նաև ենթավերնագրերը: Աշխատանքում կան դժվար ընդունելի, կամ ընթերցմելի աղյուսակներ ու գրաֆիկներ, թարմացման կարոտ վիճակագրական տվյալներ (էջ 41, 121, 194, 595, 627) և այլն: Հասկանալի է, որ թվարկած մասնավոր թերություններն էական չեն և բնավ չեն նսեմացնում կատարված մեծածավալ ու արժեքավոր ուսումնասիրության որակը և նշվում են ոչ այնքան քննադատության, որքան հեղինակի կողմից իր ապագա գիտական աշխատություններում դրանք հաշվի առնելու նպատակով:

Իր ժողովրդի և երկրի ներկայով ու ապագայով խիստ մտահոգ, միջազգային ճանաչման արժանացած տնտեսագետ Թաթուլ Մանասերյանի սույն հիմնարար աշխատությունն անտարբեր չի կարող թողնել ոչ մի ընթերցողի: Չնայած մենագրության բովանդակությունը, ոճը և լեզուն բավականաչափ բարդ են և նախատեսված հատկապես մասնագիտական որոշ պատրաստվածություն ունեցող ընթերցողի համար, այդուհանդերձ աշխատությունում բարձրացված հարցերը, քննարկված խնդիրները, կատարված առաջարկությունները և մշակված հանձնարարականները պարզ են ու հասկանալի Հայաստանի Երրորդ Հանրապետության աշխարհագրական դիրքը, ոչ բարեկամ ու թշնամի հարևանների առկայությունը երկրի տնտեսական

անվտանգությանն ու ապահովմանը սպառնացող մարտահրավերների կանխումը դարձնում են գոյատևելու առաջնահերթ հրամայական, կենաց ու մահու հարց: Ուստի, ավելորդ է խոսել գրախոսվող աշխատության կարևորության կամ այժմեականության մասին. սա հենց այն գիրքն է, որ պետք է դրված լինի ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանությունների յուրաքանչյուր ղեկավար աշխատողի աշխատասեղանին:

Հ.Գ. Այնքանով, որքանով մենագրությունը նվիրված է նաև զլոբալ առումով տնտեսական անվտանգության հարցերին, կարծում ենք ճիշտ և տրամաբանական կլիներ այն թարգմանել և հրատարակել նաև անգլերեն լեզվով, հատկապես, որ Թաթուլ Մանասերյանի անգլերենի իմացության շատ բարձր մակարդակը էականորեն կհեշտացնի գրքի նման խմբագրման ու սրբագրման աշխատանքները:

